Մեծերի կարծիքը Հովհաննես Թումանյանի մասին

Ավետիք Իսահակյան

Մեր թռիչքը Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքներից այն կողմ չի անցել:

* * *

Նրա կախարդական գրիչը ուր դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշքը՝ լինի առակ թե քառյակ, հեքիաթ թե պատմվածք, հովվերգություն թե վիպերգություն:

...Նա եղավ մեզ համար այն, ինչ որ եղավ Պուշկինը ռուսների համար, Միցկևիչը՝ լեհերի համար:

Մեծ է նաև նրա կատարած քաղաքական դերը:

Կովկասյան ժողովուրդների եղբայրացման ջատագովներից ամենից մեծն եղավ նա իր հզոր խոսքով և օրինակով: Եվ, որպես այդպիսին, անմոռանալի պիտի մնա նրա հոյակապ պատկերը:

Կորնեյ Չուկովսկի

Նրան, ով գրել է «Մի կաթիլ մեղրը», «Շունն ու կատուն», «Մուկիկի մահը», իրոք որ չի կարելի համաշխարհային արվեստի առաջնակարգ վարպետների կարգը չդասել:

Ղազարոս Աղայան

Մեր նորահաս բանաստեղծների մեջ Հովհաննես Թումանյանը միշտ բարձր է ամենքից էլ և ունի փայլուն ապագա... Նա ունի բարձրաթռիչք երևակայություն, ճոխ և սահուն լեզու, խորաթափանց զննողություն և այն բոլոր հոգեբանական առանձնահատկությունները, որոնք պետք են մի ապագա ինքնուրույն բանաստեղծի փաղանդն ու հանճարը բնորոշելու համար:

Ստեփան Զորյան

Թումանյանը հայության կյանքի բազմակողմանի ընդգրկումով, նրա հուզական աշխարհի և ոգու նկարագիրներով, հարազատ, պարզ ու վսեմ արվեստով հանդիսանում է մեր ազգային մեծ երգիչը, մեր մեծ բանաստեղծը:



Վահան Տերյան

Այսօր Թումանյանն իր լեզուն հասցրել է այն բյուրեղանման պարզության, որը մոտեցնում է նրան Պուշկինին, և որը նրա գերագույն արժանիքներից մեկը պիտի համարի:

Արմեն Տիգրանյան

Հովհաննես Թումանյանի գրեթե բոլոր գրվածքները կարելի է այս կամ այն ձևով երաժշտության վերածել, այնքան տրամադրող ու հնչուն են դրանք: Մեր բանաստեղծներից և ո՛չ մեկն այնքան չի օգտագործվել կոմպոզիտորների կողմից, որքան Հովհաննես Թումանյանը:

Պարույր Սևակ

Թումանյանը հենց նա է, ում հետ ենք մենք ամենքս՝ կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ: Հետն ենք ամբողջ կյանքներումս՝ տակավին գրաճանաչ չդարձած և մինչև մահվան մահիճ: Հետն ենք առավել, քան որևէ մեկ այլ գրողի:

Եղիշե Չարենց

Թումանյան... նահիրյան խոսքի նահապետ, կախարդ, հրաշք, անկրկնելի հանճար, զարմանալի զարմանք: